Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

8374

3КП3
Σ-22

ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԲԱԳՎԻ ԿՈՄԻՏԵ

ЗКПЗ
2-22
Библиотека Института Востоковедения Академии Наук СССР
24 SEP 2006
20 NOV 2009

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

# ԿՈՒՍՇԱՐՔԵՐԻ ԶՏՄԱՆ ՄԱՍԻՆ

## ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի

## Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶՏՄԱՆ ՄԱՍԻՆ 16-րդ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՎՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ (1929 թ. ԱՊՐԻԼ) ՀԱՄ Կ (բ) Կ ԿԵՆՏԿՈՄԸ ՎՈՐՈՇՈՒՄ Ե.

1) ԿԱՏԱՐԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՅԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԶՏՈՒՄ 1933 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ.

2) ՆԵՐԿԱ ՎՈՐՈՇՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՈՐԻՑ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՓՈԽԱԴՐԵԼՆ ԱՄԲՈՂՋ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹԵ ՔԱՂԱՔՈՒՄ ՅԵՎ ԹԵ ԳՅՈՒՂՈՒՄ:

ՀԱՄ. Կ (բ) Կ ԿԵՆՏԿՈՄ

---

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԱՐՔԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

*Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի վորոշմամբ 1933 թվի ընթացքում անց ե կացվելու կուսակցության անդամների և թեկնածուների զտումը: Միաժամանակ՝ այս վորոշման հրապարակվելու որից դադարեցվում ե թեկնածուների ընդունելությունները ու կուսակցության անդամ փոխադրելը ամբողջ Խորհրդային Միության մեջ ինչպես քաղաքում, այնպես ել գյուղում:*

*Կենտկոմի այս վորոշումը, վորը բացառիկ կարևոր քաղաքական նշանակություն ունի, հիմնված ե 16-րդ կուսկոնֆերանսի վորոշման վրա (1929 թվի ապրիլին)՝ Համկոմկուսի բոլոր անդամների և թեկնածուների պարբերական զտումներ կատարելու անհրաժեշտության մասին, վորի նպատակն ե բարելավել վողջ կուսակցության և կուսակցական կազմակերպությունների սոցիալական կազմն ու բարձրացնել նրանց քաղաքական ու բարոյական մակարդակը տեղերում:*

8374

Կուսակցության առաջին ընդհանուր զտումը անց է կացվել Լենինի առաջարկությամբ 1921 թ., յերբ կուսակցությունը տնտեսական նոր քաղաքականությանն անցնելիս համախմբում էր իր շարքերը: Կուսակցության շարքերի յերկրորդ գլխավոր զտումը — ստուգումը կատարվեց 1929 թվին՝ սոցիալիզմի համար մղվող պայքարի ամենադժվարին ետապում, յերբ կուսակցությունն ամբողջ ֆրոնտով ծավալուն սոցիալիստական հարձակման էր անցնում: Յերրորդ զտումն անց է կացվելու յերկրորդ հնգամյակի համար մղվող պայքարի առաջին տարում:

Կատարելով իր շարքերի գլխավոր զտումները, ինչպես և մասնակի ստուգումները (վոչ-արտադրական բջիջների անդամների և թեկնածուների համար՝ 13-րդ կուսկոնֆերենսից հետո, գյուղական բջիջների մասնակի ստուգումը 1926 թվին), ստուգելով ամեն մի կոմունիստի աշխատանքը, նրա նվիրվածությունը բանվոր դասակարգի գործին, մեր կուսակցությունը կատարել և կատարում է Կոմինտերնի պատկանելիության պայմաններից (13-րդ կետը) մեկը, վորը պահանջում է, վոր «Բոլոր յերկրների կոմունիստական կուսակցությունները, վորտեղ կոմունիստներն աշխատում են լեգալ կերպով, պետք է կատարեն կուսակցական կազմակերպությունների անձնակազմի պարբերական զտումները (վերացուցակագրություն), վորպեսզի սիստեմատիկորեն մաքրեն կուսակցությունն անխուսափելիորեն նրան հարող մանր բուրժուական տարրերից»:

16-րդ համագումարից հետո կուսակցության անդամների և թեկնածուների թիվը աճեց մեկ միլիոն 278 հազարով (1930 թ. ապրիլի մեկին՝ մեկ միլիոն 852 հազար, 1932 թվի հուլիսի մեկին՝ յերեք միլիոն 130 հազար): Ուրիշ խոսքով ասած՝ վերջին յերկու տարում կուսակցության թիվն աճել է 69 տոկոսով, մինչդեռ 15-րդ համագումարից մինչև 16-րդը կուսակցությունն աճել է միայն 42,2 տոկոսով, իսկ 14-րդ համագումարից մինչև 15-րդը՝ ընդամենը 20,8 տոկոսով:

Ո՞վ է մտել կուսակցության շարքերը: Այս տարիներում մեր կուսակցությունը հիմնականում աճել է՝ քաղաքում արտադրության մեջ աշխատող լավագույն հարվածայինների հաշվին, գյուղում առաջավոր կոլխոզնիկների հաշվին: Սակայն վոչ ամեն տեղ կուսակցական կազմակերպությունները ուշադրությամբ են ընտրել կուսակցության մեջ մտնողներին: Ավելին, մի քանի կուսկազմակերպություններ ուղղակի ընկած էին քանակի հետևից, տարվում էին գործի «հանդիսավոր» կողմով, ընդունում էին տոներին և այլն:

Տարրական պահանջը՝ նախորոք լուրջ կերպով ուսումնասիրել կուսակցության թեկնածու դառնալ ցանկացողներից յուրաքանչյուրին, ստուգել նրան՝ հաճախ խախտվում էր և փոխարինվում կուսակցության կոլեկտիվ ընդունելությունների աղմուկով: Յեվ հասկանալի է, վոր այն դեպքերում, յերբ սոսկ քանա-



կի հետևից էին ընկած (կարծես թե կուսակցության մարտունակությունը վորոշվում է միայն նրա քանակական կազմով), ուշադրություն չէր դարձվում ընդունվողների վորակի վրա: Հաճախ կուսակցության մեջ ընկերներին ընդունում էին միայն կուսակցությանը համակրելու, խորհրդային իշխանությանն աջակցելու հատկանիշով:

ИНСТА… …ВЕДЕНИЯ Академии Наук …ССР

Արդյո՞ք, այդքանը բավական է: Վոչ: Յեթե այդպես [illegible] մեր յերկրի աշխատավորների ճնշող մեծամասնությունը պ[illegible] կլիներ ընդունել կուսակցության շարքերը:

Ահա՝ թե ինչու յերբեմն կուսակցության մեջ ընկնում էին այնպիսի ընկերներ, վորոնք դեռ չէին համակվել այն մեծագույն պատասխանատվության հասկացողությամբ, վոր դնում է նրանց վրա կուսակցության մեջ ընդունվելը, վորոնք չեն հասկանում կուսակցականի պարտականությունները, վորոնք հօգուտ կոմունիզմի անձնազոհ աշխատանք են պահանջում: Իսկ կուսակցական վորոշ կազմակերպությունները, մանավանդ գյուղում, խիստ լցվեցին կոմունիզմի գործին խորթ մարդկանցով, վորոնք ընդունակ չեն անցկացնելու կուսակցության քաղաքականությունը: Տեղ-տեղ ճարպիկորեն մեր շարքերը մտավ դասակարգային թշնամին, ոգտվելով կուսակցական վորոշ կազմակերպությունների քաղաքական զգաստության բթացումից:

Հարկավոր է հիշել, թե վորքան խիստ էր վերաբերվում Լենինը կուսակցության ընդունելությանը, ինչպես բարձր պահանջներ էր ներկայացնում կուսակցության մեջ մտնողին, թե նա ինչպիսի ամենալուրջ քննություն էր համարում թեկնածուական ստաժն անցնելը:

«Անշուշտ,—մատնանշում էր Լենինը,—մեզ մոտ շարունակ բանվոր են համարվում այնպիսիները, վորոնք խոշոր արդյունաբերության վոչ մի լուրջ շկոլա չեն անցել: Հաճախ բանվորական կատեգորիային են ընկնում ամենաիսկական մանր-բուրժուաներ, վորոնք պատահմամբ ամենակարճ ժամանակով դարձել են բանվորներ»: Յեվ Լենինը առաջարկում էր կես տարվա թեկնածուական ստաժ սահմանել «միայն այն բանվորների համար, վորոնք 10 տարուց վոչ պակաս փաստորեն յեղել են բանվորներ խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում»:

Լենինյան ցուցումները բանվոր դասակարգի կազմի վոչ միատարր լինելու մասին՝ պահպանում են իրենց քաղաքական նշանակությունը նաև այժմ: Մի՞թե մեզ մոտ յերբեմն չի պատահում, վոր արտադրության մեջ յերկու յերեք ամիս կամ նույնիսկ մի տարի աշխատած մարդուն համարում են արդեն պատվավոր պրոլետար և հեշտությամբ ընդունում են կուսակցության մեջ, չնկատելով, վոր մի քանիսների կողմից արտադրության մեջ անցնելը յուրահատուկ մանյովր է, վորպեսզի ավելի հեշտ խցկվեն կուսակցության մեջ կարյերիստական և մորթապաշտական նպատակներով:

17.09.2013

Այդ ժամանակ ոպոզիցիան սքողում էր կուսակցության՝ վորպես բանվոր դասակարգի առաջավոր մասի և բանվորների ամբողջ մասսայի միջև յեղած տարբերությունը, քարոզում էր կուսակցության ձուլումը բանվոր դասակարգի մեջ, հանդես էր գալիս զտման դեմ: Կուսակցությունը միշտ վճռական հակահարված է հասցրել այդ փորձերին, գտնելով, վոր կուսակցությունն առանց տատանվող տարրերից պարբերաբար զտվելու՝ չի կարող ամրանալ» (ՍՏԱԼԻՆ):

Դեռ 1922 թվի մարտին, յերբ կուսակցությունը զտման հետևանքով հեռացրեց իր շարքերից մոտ 200 հազար անդամ Լենինը Կենտկոմի պլենումի համար Մոլոտովի անունով գրում էր. «Յեթե մեր կուսակցությունն ունի 300–400 հազար անդամ, այդ թիվն էլ շատ է, վորովհետև բոլոր տվյալները վճռականապես մատնանշում են կուսակցության այժմյան անդամների վոչ բավականաչափ պատրաստված մակարդակը»:

Լենինի այս ցուցմունքը տրվել է վերականգնման ժամանակաշրջանի ամենասկզբում, յերբ բանվորների զգալի մասը ցրված և ապադասակարգայնացած էր:

Կոմունիստների զգալի մասի քաղաքական ցածր մակարդակն այժմ հանգում է այն բանին, վոր յերբեմն կուսակցականներն անընդունակ են լինում դիմադրելու դասակարգային թշնամուն, մանավանդ գյուղում, և կուլակի ճանկն են ընկնում: Քիչ չէ կուսակցության այնպիսի անդամների և թեկնածուների թիվը, վորոնք չգիտեն կուսակցության ծրագիրն ու տակտիկան, վորոնք քաղաքականապես անգրագետ են, չեն ուսումնասիրում մարքսիզմը – լենինիզմը:

Հաճախ մի վորևէ ընկեր, վորն իր անձնական տրամադրություններով անշուշտ նվիրված է կուսակցությանը և խորհրդային իշխանությանը, գործով, վորպես կուսակցության անդամ, կարող է նույնիսկ իր կամքից անկախ վնաս հասցնել հենց իր քաղաքական թույլ պատրաստության հետևանքով, հենց այն պատճառով, վոր նա դեռ չի կարողանում կուսակցության ոգտին քաղաքականապես գլխավորել և իր հետևից տանել կոլխոզնիկների կամ անկուսակցական բանվորների մասսային: Այստեղ մենք հաճախ փաստորեն գործ ենք ունենում վոչ թե կուսակցության անդամի, այլ միայն այնպիսի ընկերոջ հետ, վորը համակրում է կուսակցությանը: Իսկ մեզ մոտ այդպիսի համակրողներին շտապում են յերբեմն կազմակերպության մեջ ընդունել, չհասկանալով, վոր տարբերություն կա կուսակցությանն ոգնել ցանկացող ընկերոջ և կուսակցության այն անդամի միջև, վորը պետք է անհրաժեշտ քաղաքական պատրաստություն ունենա, պետք է կարողանա կուսակցության լոզունգներով իր հետևից տանել անկուսակցական մասսային: Կամ թե թեկնածուներից կուսակցության անդամ են փոխադրում այն ընկերներին, վորոնք դեռ չեն յուրացրել կուսակցության ծրագիրն ու տակտիկան, վորոնք դեռ չգի-

Գրադարան
Гос. Библиотека
ZUUU—Арм ССР
59150-66



տեն ինչպես կուսակցության կարգապահ անդամ լինել, ինչպես պայքարել նրա յերկաթե կարգապահության համար: Յեվ այդ արվում է հակառակ Լենինի ցուցմունքին՝ «Թողնել կուսակցության մեջ միայն գիտակիցներին, կոմունիզմին անկեղծորեն նվիրվածներին»:

Ի՞նչպես է ոգտվում կուսակցության յուրաքանչյուր անդամ և թեկնածու:

Կուսակցության յուրաքանչյուր անդամ և թեկնածու պարտավոր է իմանալ նրա ծրագիրը, կարևորագույն վորոշումները, պարտավոր է կենսագործել այդ վորոշումները, պահպանել կուսակցության յերկաթե կարգապահությունը: «Ով թեկուզ շատ քիչ չափով թուլացնում է պրոլետարիատի կուսակցության յերկաթե կարգապահությունը (մանավանդ նրա դիկտատուրայի ժամանակ), նա փաստորեն ոգնում է բուրժուազիային ընդդեմ պրոլետարիատի» (ԼԵՆԻՆ):

Բացի այդ, ձեռնարկության մեջ ամեն մի կոմունիստ ստուգվում է ըստ այն, թե ինչպես է պայքարում սոցիալիստական աշխատանքի կարգապահության համար, գործալքումների և գործալքողների դեմ, բրակ տվողների, լոդրների և չվողների դեմ ըստ այն, թե նա աշխատանքային կարգապահության ինչպիսի որինակ է ցույց տալիս: Մի՞թե մեզ մոտ քիչ են կուսակցության այնպիսի անդամներ և թեկնածուները, վորոնք իրենց արտադրության մեջ վոչ միայն հարվածայիններ չեն, այլ և, ընդհակառակը, գործալքումներով, ալարկոտությամբ և այլն արատավորում են կոմունիստի կոչումը:

Կուսակցական դիրքը շահադիտական նպատակներով լայն կերպով ոգտագործելն ամենից ավելի հնարավոր է վոչ-արտադրական բջիջներում՝ վատնումներ, պրոտեկցիոնիզմ, կարյերիզմ, բյուրոկրատական վերաբերմունք դեպի մասսաները: Այստեղ կուսակցականների մեջ ամենից հաճախ կարելի է տեսնել յերկերեսանիության, քաղաքական և բարոյական քայքայման, այլասերման, խորթ տարրերի ազդեցության, կուսակցական կարգապահության խախտման փաստեր:

Պետական փողերի և մատակարարման ֆոնդերի ծախսելուն արհամարհական և թեթևամիտ վերաբերմունք ցույց տալուն, շտատների մեծացմանը, վորն ուժեղացնում է բյուրոկրատական աղավաղումները, անհոգի բյուրոկրատիզմը, աշխատավորների կարիքներին և պահանջներին անուշադիր լինելուն, աչքակապությանը—մեր պետական և տնտեսական ապարատի ոպորտունիզմի և բյուրոկրատիզմի այս բոլոր արտահայտություններին ուժեղ հարված է հասցնելու կուսակցության զտումը:

Գյուղում ամեն մի կուսակցական ստուգվելու է նաև ըստ այն, թե ինչպես է պայքարում պետական առաջադրությունները կատարելու համար, կոլխոզի և մենատնտեսների պարտավորությունները հացամթերումների, մսամթերումների և այլն գծով կա-

տարելու համար: Գյուղում ամեն մի կուսակցական ստուգվելու է ըստ այն, թե որքան նա ապահովվում է բոլշևիկյան ազդեցությունը կոլխոզում, թե որքան ակտիվ պայքար է մղում կուլակի և յենթակուլակի դեմ, ինչպես և պահպանում սոցիալիստական հասարակական սեփականությունը, վորքան ակտիվ մասնակցություն է ցույց տալիս կոլխոզային արտադրությանը:

17-րդ կուսակցական կոնֆերանսը մատնանշեց դասակարգային պայքարի հետագա սրման անխուսափելիությունը առանձին մոմենտներում, մանավանդ սոցիալիստական շինարարության առանձին տեղամասերում, մատնանշեց բանվորների և նույնիսկ կուսակցության մեջ պրոլետարիատի խորթ դասակարգային ազդեցությունների թափանցման անխուսափելիությունը դեռ յերկարատև ժամանակի ընթացքում, և այդ կապակցությամբ ընդգծեց, վոր անհարժեշտ է ամրացնել պրոլետարական դիկտատուրան ու հետագայում ծավալել պայքարը ոպորտունիզմի դեմ, մանավանդ աջ թեքման՝ վորպես տվյալ էտապի գլխավոր վտանգի դեմ: Կյանքը ցույց տվեց կուսկոնֆերանսի այդ ցուցմունքների ամբողջ կարևորությունը և ժամանակին լինելը:

Պրոլետարիատին խորթ դասակարգային ազդեցությունները ամենից ավելի յերևացին կուսակցության գյուղական բջիջներում Առանձին կուսբջիջներում խորամանկաբար, ծպտյալ կերպով ներս են խծկվել կուսակցության վոխերիմ թշնամիները, Պետլյուրայի և սպիտակ-բանդիտային մյուս կազմակերպությունների գործակալները՝ բջիջները քայքայելու և կուսակցության քաղաքականությունը վարկաբեկելու նպատակով: Լինում են դեպքեր, յերբ հացամթերումների ժամանակ կուլակության կազմակերպած սաբոտաժը գլխավորված է յեղել գրպանում կուստոմս ունեցող կուսակցության դավաճանների կողմից (կոլխոզային բջջի նախկին քարտուղար Կոտովի գործը Հյուսիսային Կովկասում, վորի մասին գրել է «Պրավդա»-ն): Վերջին որերս Դնեպրոպետրովսկի մարզում դրսեվորվել է Օրեխովի ռայոնի ղեկավար աշխատողների հանցապարտ, դավաճանական գործունեությունը, յերբ այդ աշխատողները առաջարկում եին գյուղական կուսկազմակերպություններին և կոլխոզներին՝ չկատարել հացամթերումների ռայոնական պլանը:

Հացամթերումների սաբոտաժի հակահեղափոխական փորձերը և կուլակության մնացորդների վնասարար աշխատանքը կոլխոզներում, վոչ մի հաջողություն չեն կարող ունենալ, յեթե գործով նրանց չօգնեն կուսակցությանը խառնող «կոմունիստների» մի մասը: Միայն այնտեղ, ուր կուլակության վնասարար աշխատանքը գլխավորել են կուսակցության թշնամիները՝ կուստոմսը գրպանում, այդ աշխատանքը տվել է վորոշ արդյունքներ, մասամբ քայքայել է կոլխոզները:

Կուսակցության անդամների և թեկնածուների զտումը հարկավոր է կազմակերպել հիմնովին, կենտրոնացնել ուշադրությու-



նը կազմակերպության վորակական կազմի վրա: Կուսակցության մեջ հարկավոր է թողնել միայն նրան, ով մինչև վերջ նվիրված է բանվոր դասակարգի գործին, ով ամենից բարձր է դասում կոմունիզմի կուսակցության շահերը:

Չորս պատվիրան, չորս պահանջ կա դրված կուսակցության ամեն մի անդամի և թեկնածուի առաջ:

Կուսակցության առաջ յեղիր ճշմարտախոս, յեղիր ազնիվ. Քո վարքագծով մի խայտառակիր կոմունիստի կոչումը:

Վճռական պայքար մղիր յերկերեսանիների, այլասերվածների, կուսակցությանը խաբողների դեմ: Յերկերեսանիներին, այլասերվածներին և խաբեբաներին՝ դուրս կուսակցությունից:

Կուսակցության համար յեղիր կարգապահ անդամ, հետևողական պայքար մղիր նրա գծի և վորոշումների համար, նրա յերկաթե կարգապահության համար, նրա լենինյան կենտկոմի համար: Ով թեկուզ ամենաչնչին չափով կտրտանի բոլշևիկյան յերկաթե կարգապահությունը՝ նա աշխատում է բանվոր դասակարգի թշնամիների համար, նա տեղ չունի լենինյան կուսակցության մեջ:

Իմացիր կուսակցության ծրագիրը և տակտիկան, ուսումնասիրիր մարքսիզմ-լենինիզմը: Ով չի ուզում աշխատել, վոր բարձրացնի իր քաղաքական մակարդակը, նա չի կարող լինել կոմունիստական կուսակցության անդամ:

Յերկրորդ հնգամյակի շեմքին մեր սոցիալիստական տնտեսության և համաշխարհային հեղափոխական շարժման վերելքի պայմաններում լենինյան մեծ կուսակցությունը նորից ստուգում և զտում է իր շարքերը, վորպեսզի նրանց ավելի կոփի, վորպեսզի ավելի բարձր պահի Լենինի դրոշը:

Մերկացնելով և դուրս շպրտելով իր շարքերից կուսակցական կարգապահությունը խախտողներին, աջ ոպորտունիստներին, հակահեղափոխական տրոցկիստներին, յերկերեսանիներին և խաբեբաներին, վորոնք ձևականորեն համաձայն են կուսակցության գծին, իսկ գործով ստոր հակակուսակցական աշխատանք են տանում, անողոք հակահարված հասցնելով կուսակցական գծի «ձախլիկ» աղավաղումներին, ոպորտունիզմին ցույց տրվող ամեն տեսակ հաշտվողականությանը՝ կուսակցությունն էլ ավելի միաձույլ կդարձնի իր շարքերը:

Կուսակցության շարքերի զտումն էլ ավելի կբարձրացնի նրա միատարրությունը և մարտունակությունը, կամրացնի նրա կապը աշխատավոր մասսաների հետ, ավելի սերտորեն կհամախմբի կուսակցության շարքերը՝ պայքարելու յերկրորդ հնգամյակի պատմական խնդիրների, համաշխարհային պրոլետարական հեղափոխության գործի համար:

(«Պրավդա»-ի դեկտեմբեր 12-ի առաջնորդողը)

ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
С.С.Р

## ՆՅՈՒԹԵՐ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Լենին — Կուս. զտման մասին
   I-ին հրատարակություն — հատոր XVIII մաս I-ին
   II-րդ և III-րդ հրատարակություն — հատոր XXVII
2. Ստալին—Լենինիզմի հարցերը հայերեն (հրատարակություն)
   Լենինիզմի հիմունքների մասին գլ. VIII, § 6 կամ եջ.
   103 — 106. — Օպոզիցիայի մասին եջ — 90 — 91.
3. Ստալին — Լենինիզմի հարցերը —
   Լենինիզմի հարցերի շուրջը գլ. V — եջ — 285 — 310.
4. Կոմհաշվետվության առթիվ XVI-րդ կուս. համագումարի ընդունած բանաձևից՝ կուս. զտման մասին.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ—Арм ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆ.
Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

БАКИНСКИЙ КОМИТЕТ АКП (б)

# БОЕВАЯ ПРОВЕРКА ПАРТИЙНЫХ РЯДОВ

ПОСТАНОВЛЕНИЕ ЦК ВКП (б)

от 10 декабря 1932 года.

Баку - 1932 г.

Тип. „III Интернационал" Бакполиграф Главлит 8160 Заказ 3

3КП3
Z-22

ՀՀ Ազգային գրադարան
NL0180805